

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՆՑ Է ԿԱՑՎԵԼ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ



Մուր հռչակագրի ընդունման օրվան: Խաղը բավականին հետաքրքիր էր: Մասնակցել է 6 թիմ: Առաջին պատվավոր տեղն են զբաղեցրել իրավագիտություն 3-րդ և քաղաքագիտություն 3-րդ կուրսերի թիմերը, 2-րդ տեղն է զբաղեցրել պատմություն 2-րդ կուրսի թիմը, իսկ 3-րդ հորիզոնականը զբաղեցրել է պատմություն 3-րդ կուրսի թիմը: Հաղթող թիմերը պարգևատրվել են պատվոգրերով: Համալսարանը խրախուսում է նման մրցույթների կազմակերպումը, քանի որ այն ավելի շատ հետաքրքրություն է առաջացնում դեպի կրթությունն ու գիտությունը:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում կազմակերպված ինտելեկտուալ խաղ-մրցույթը նվիրված էր ԱՀ Սահմանադրության և մարդու իրավունքների համընդհանուր...

Լենա ՍՈՒՄԱՅԵԼՅԱՆ, Պատմություն 1-ին կուրս

# ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

Դեկտեմբերի 20-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսում տեղի է ունեցել բաց սեմինար-դաս հայ ժողովրդական բանահյուսությունը դասընթացից՝ Բ.Գ.Ք. դոցենտ Ջինաիդա Բալայանի ղեկավարությամբ:



Ուսանողները հանդես են եկել համերգային ծրագրով, որտեղ հնչել են հայ բանահյուսության պատահիկներ, երգ, պար, ասմունք: Ջ.Բալայանը բացման խոսքում նշել է, որ հասել է իր նպատակին, որն էր՝ ուսանողների համար բացահայտել հայ ժողովրդի գրական հարուստ ժառանգության մի փոքր մասը, բանահյուսական հարստությունը:

Կուլտետի ղեկան Լ.Մարգարյանը: Նրանք իրենց խոսքում ընդգծել են հայ բանահյուսության ազգային, մշակութային նշանակությունը և կարևորել ուսանողների ստացած գիտելիքները նման կերպով ներկայացնելը:

Լուսինե ՕՂԱՆՋԱՆՅԱՆ, ՀԼԳ 1-ին կուրս



**«Քո ժամանակը»**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Տպաքանակ՝ 400

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի իրատարակչության տպարանում



# Քո ժամանակը

Դու ես կերտում քո ժամանակը: Համոզված եղիր՝ տարիներ հետո Քո կերտած ժամանակը լավն է լինելու...

№ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ամանորը տոն է, որը սիրում են գրեթե բոլորը: Տոն, որն ասոցացվում է հրաշքների, հեքիաթայինի, առեղծվածայինի հետ: Ամփոփելով 2018 թվականը և մի հետադարձ հայացք ձգելով անցնող տարում՝ հաշվեկշռի ենք ենթարկում ձեռքբերումներն ու չիրականացված ծրագրերը: Եվ եթե ձեռքբերումները շոշափելի են, ուրեմն տարին հաջող է եղել:

Կոչվել, ձեռք ենք բերել մոր ընկերներ, համագործակցային կապերը խորացրել ենք ՀՀ և արտերկրի բուհերի ուսանողական ինքնավար կառույցների և, առհասարակ, ուսանողության հետ: 2018 թվականը հաջողությունների տարի էր: Մաղթում ենք, որ գալիք տարում ևս մեր հաջողություններն ու ձեռքբերումները լինեն շարունակական, և թող սերը, համերաշխությունն ու երջանկությունը թևածեն մեր հայրենիքում ու բոլորիս ընտանիքներում: Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Դիանա Խաչատրյան, ԱրՊՀ ՈՒՍ Ամսագրի

Խաղաղության ևս մեկ տարի, ուսումնական հաջողություններով հագեցած ևս մեկ տարի, գիտելիքների ձեռքբերման ևս մեկ տարի. ձեռքբերումները քիչ չեն, սակայն առջևում մոր ծրագրեր և մարտահրավերներ են, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ կլինեն կամք, նպատակասլացություն, համառություն և աշխատասիրություն: Թող 2019 թվականը լինի երազանքների, նորանոր ծրագրերի իրականացման տարի: ԱրՊՀ ուսանողները շնորհավորում են բոլորիս Ամանորն ու Սուրբ Ծնունդը և հղում լավագույն բարեմաղաքներ:

Սիրելի՛ ուսանողներ, շնորհավորում են բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Անցնող տարին հագեցած էր ուսանողական բազմաբովանդակ ծրագրերով, որոնք էլ ավելի հետաքրքիր և գունեղ դարձրին մեր ուսանողական առօրյան: Գիտակրթական, մշակութաժամանցային, ռազմահայրենասիրական, հանրօգուտ և ամենատարբեր ուղղվածություն ունեցող միջոցառումներին ա կ տ ի վ ո Ր Ե Ն մասնակցել է համալսարանի գրեթե ողջ ուսանողությունը, որի արդյունքում էլ ավելի է ակտիվացել

Սիրելի՛ համալսարանականներ, ջերմորեն շնորհավորում են բոլորիս Ամանորը և Սուրբ Ծնունդը՝ մոր տարում մաղթելով նորանոր հաջողություններ կյանքի բոլոր բնագավառներում: Թող անցնող տարում մնան բոլոր դժվարություններն ու անհաջողությունները, ու թող բոլորս մեր ակնկալիքներով, մեր ուժերի հանդեպ վստահությամբ զ գ ա ց ու մ վ մտենք մոր տարի: Թող այս մոր տարին բազմաթիվ երջանիկ պահերի, ժպիտների ու հաղթանակների տարի լինի: Խաղաղություն և բարօրություն լինի մեր երկրում, մեր օջախներում և սրտերում: Հավատով լցվենք ու վստահ լինենք, որ մեր երկրի լավ ապագան կախված է մեզնից՝ երիտասարդներիցս, ու թող գալիք տարում հնարավորություն ունենանք ավելի շատ արարելու, ստեղծագործելու, զարգանալու, ստեղծելու մոր գաղափարներ: Դարձնենք մեր շրջապատն ավելի պայծառ ու գունեղ: 2019 թվականը թող լինի ձեռքբերումների տարի: Եղեք նախաձեռնող, ձգտեք լավագույնին և հասեք Ձեր բոլոր նպատակներին:




նախաձեռնող, ձգտեք լավագույնին և հասեք Ձեր բոլոր նպատակներին:

ուսանողական կյանքը: Համահայկական ֆորում, միջազգային ուսանողական գիտաժողով, ամառային միջազգային դպրոց և կարևոր նշանակություն ունեցող այլ ծրագրեր են կյանքի

Լիլիթ Մարգարյան, Բանասիրական ֆակուլտետի ՈՒՍ Ամսագրի



Սիրելի՛ ուսանողներ, ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ: Մաղթում եմ խաղաղություն, ամնկուն կամք, համբերություն, երազանքների իրականացում: Ամանորը հրաշալի տոն է, մաղթում եմ, որ գալիք տարին լինի լավագույն հույսերի և ցանկությունների իրականացման, համերաշխության և սիրո տարի, ետևում մնան բոլոր դժվարություններն ու



ամենօրյա հոգսերը: Խաղաղությունն ու բարօրությունը թող տիրի մեր երկրում ու բոլորիս ընտանիքներում: Ցանկանում եմ, որ նոր տարում շարունակենք ձգտել ավելի, միշտ փնտրենք և հասնենք մեր նախանշած բարձունքին: Բոլորիս մաղթում եմ արարման, ինքնաճանաչման, կերտման, նորանոր բացահայտումների, անձնական ու համամարդկային ջերմ ապրումների տարի: Թող գալիք թվականին ամեն մարդ գտնի երջանկության բանաձևը:

**Էդիտա Առստամյան,**

**Բնագիտական ֆակուլտետի ՈՒՒՄ Նախագահ**  
\*\*\*

Սիրելի՛ համալսարանականներ, Ամանորն ու Սուրբ Ծնունդը ամենասիրված ու սպասված տոներն են բոլորիս համար: Տոն, որ երազանքների իրականացման հույսեր է պարզում: Անցնող տարին հետաքրքիր էր, յուրօրինակ և հաջողություններով լի: Ուսանողական ուրախ առօրյա, ուսումնական լարված ու դժվար գործընթացներ, բայց արձանագրված արդյունքները՝ գոհացուցիչ: Մաղթում եմ, որ գալիք տարում ևս կարողանանք բարձր պահել մեր առջև դրված նշանակը, նոր գիտելիքների ձեռքբերման



յունքները՝ գոհացուցիչ: Մաղթում եմ, որ գալիք տարում ևս կարողանանք բարձր պահել մեր առջև դրված նշանակը, նոր գիտելիքների ձեռքբերման

առումով լինենք համառ, նպատակասլաց և երբեք չծուլանանք: Համոզված եմ՝ հաջողությունները մեզ ուղեկից կլինեն:

Մաղթում եմ, որ գալիք տարին իր հետ բերի նորանոր բարի ու զեղեցիկ անակնկալներ, սերն ու երջանկությունը թևածեն բոլորիս ընտանիքներում: Խաղաղություն Արցախ աշխարհին:

**Ռիմնա Մանգասարյան,**

**Մանկ. և սպորտի ֆակուլտետի ՈՒՒՄ Նախագահ**  
\*\*\*


Մենք բոլորս ապրում ենք, սպառում ենք մեզ հատկացված ժամանակը տիեզերքի այս իմաստավոր ավազահատիկի վրա, անց ենք կացնում մեր կարևոր գոյությունը պայքարելով չարի դեմ՝ կատարելության համար. բարի մարդկանց պայքար, որի հաղթանակը կլինի լուսավոր հավիտենությունը: Չեմ ցանկանում վեց տարեկան միամիտ մանկանման, տրամաբանությունից դուրս մաղթանքներ հղել կամ ցանկություններ հայտնել, ուստի ուղղակի առաջարկում եմ ձեզ, որպես բանական մարդիկ, գործի դնել գիտակցության բոլոր ազդակները և հասկանալ սիրո, գիտության և հավատի կարևորությունը, որով հետև այս երեքով առաջնորդվելու դեպքում ինքնաբերաբար կկատարվեն վեց տարեկան մանկան բոլոր մաղթանքները և ցանկությունները: Առաջնորդվեք և կձաշակեք իրական երջանկության, հաջողության և խաղաղության առկայության հաճույքը: Սիրելի՛ բարի մարդիկ, իմ քույրեր և եղբայրներ, արժանի եղեք այն ամենին, ինչ ունեք, որակյալ դարձրեք ձեր կյանքը ինքներդ, թողեք բոլոր բացասականը անցնող տարում և 2019 թվականը սկսեք բարի ժպիտներով և հետաքրքիր գիտելիքներով: Շնորհավոր բոլորիս գալիք բարի Նոր տարին, թող այս տարին լինի ուսումնական ձեռքբերումների և մարդկային արժեքների վերածննդի տարի: Աստված բոլորիս պահպանի:



առաջարկում եմ ձեզ, որպես բանական մարդիկ, գործի դնել գիտակցության բոլոր ազդակները և հասկանալ սիրո, գիտության և հավատի կարևորությունը, որով հետև այս երեքով առաջնորդվելու դեպքում ինքնաբերաբար կկատարվեն վեց տարեկան մանկան բոլոր մաղթանքները և ցանկությունները: Առաջնորդվեք և կձաշակեք իրական երջանկության, հաջողության և խաղաղության առկայության հաճույքը: Սիրելի՛ բարի մարդիկ, իմ քույրեր և եղբայրներ, արժանի եղեք այն ամենին, ինչ ունեք, որակյալ դարձրեք ձեր կյանքը ինքներդ, թողեք բոլոր բացասականը անցնող տարում և 2019 թվականը սկսեք բարի ժպիտներով և հետաքրքիր գիտելիքներով: Շնորհավոր բոլորիս գալիք բարի Նոր տարին, թող այս տարին լինի ուսումնական ձեռքբերումների և մարդկային արժեքների վերածննդի տարի: Աստված բոլորիս պահպանի:

**Մարիամ Ասրյան,**  
**Աշխարհագրություն, 1-ին կուրս**

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ՝ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՀԱՆԳՐՎԱՆ



Ուսանողական ակտիվ և ստեղծագործ կյանքում իր անհատականությամբ առանձնանում է ԱրԴԴ հայոց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Ադամյանը, ում համար ուսանողական կյանքը ստեղծագործելու նպաստավոր հանգրվան է:

**-Ալլա, մեր օրերում ստեղծագործող ուսանողը ինչպիսի՞ հոգեկերտվածք պետք է ունենա, և ի՞նչն է պակասում:**

-Ստեղծագործող անհատի միտքն անընդհատ փնտրտուքի մեջ է: Պետք է համառորեն աշխատել, ջանք ու եռանդ չխնայել, քո ունեցած շնորհը սեփական ժողովրդին ու գրականությանը ծառայեցնել: Միայն մեծ աշխատասիրությամբ մարդը կարող է հասնել ստեղծագործական հաջողությունների: Ե՛վ գիտական, և՛՝ մշակութային շփումներից, կարծում եմ, առավել շահավետ է շփումը գրքի հետ:

**-Ուսանողական կյանքի հետ համատեղ դու ակտիվ ես ամենուր՝ գիտական, գրական բնագավառներում՝ հավաքներ, միջոցառումներ, բանավեճեր, հանդիպումներ: Ակտիվ ես նաև համացանցում: Որքանո՞վ է այդ դաշտը հասանելի և օգտակար այսօրվա ուսանողին:**

-Համացանցային դաշտում ես իմ հետաքրքրությունը սպառում եմ հետաքրքիր նորություններ իմանալով, առավել մեծ ուշադրություն սևեռելով երիտասարդների աշխատանքներին, նրանց ստեղծագործ ուժով կատարված նորամուծություններին և գրառումներին: Սիրում եմ այդ դաշտում կարդալ, լսել ասումք և ստանալ բավականություն:

**-Ալլա, չնայած դու դեռ գրողների միության անդամ չես, բայց քո կապն այդ աշխարհի մարդկանց հետ իրականանում է գրեթե ամեն օր՝ դասախոսություններ, հանդիպումներ: Ի՞նչ հեռանկարային ծրագրեր ունես:**

-Կարծում եմ՝ դեռ այն աստիճան չեմ կայացել, որպեսզի լրացնեմ նրանց շարքերը, բայց հանդիպումներ եմ ունեցել, շփվել, զրուցել, հարցեր քննարկել: Իսկ ստեղծագործում եմ գիշերը: Մի ժամանակահատված, երբ չկա խոչընդոտող ոչ մի ազդակ: Հուսով եմ՝ հեռանկարում ես դեռ կունենամ ստեղծագործական վառ ուղի:

**-Ո՞վ կամ ի՞նչը առաջինը ծնվեց քո տողերում: Ինչպիսի՞ն է քո առաջին բանաստեղծության նկարագիրը:**

-Իմ առաջին տողերը մորս են նվիրված, ստեղծագործում եմ մանկուց, իսկ ուսանողական կյանքը

ընթացք հաղորդեց իմ բանաստեղծությանը: Իմ հոգում բառերի տեղատարափ է: Առաջին տողերիս ծնունդը մորս այցի գալն էր իմ երազում և իմ կյանքում մի նոր աշխարհի ստեղծելը, քանի որ, ցավոք, նրա հետ կապված ամեն ինչն է երազ: Նրա կորստից ծնվում են տողեր՝ անբացատրելի, անվերծանելի:

**-Քո տողերում, ասես, մի թեմա է ընդգծվում՝ բազմամարդ հասարակությունում միայնություն և տազնապի զգացողություն: Ինչպե՞ս կրնու՞թազդես այն:**

-Իմ ամեն մի նոր գրության ու տողի մեջ կա մի յուրահատուկ պատկեր: Ինչքան էլ շատ ստեղծագործեմ, նրանցից յուրաքանչյուրի մեջ մշտապես կա թախիծ, ափսոսանք, ցավ, և ամենավերջում՝ անհագ կարոտ՝ հասնելու լուսնի լույսին, որն էլ հենց կլինի իմ անդրանիկ գրքի վերնագիրը՝ «Փոթորիկ լուսնի վրա»:

**-Ինչպե՞ս ես ընկալում նորօրյա գրողներին ու նրանց բանաստեղծությունները:**

-Սկզբից շատ դժվար ընկալեցի ազատ միտքը, բայց ժամանակի ընթացքում հասկացա, որ ազատությունն, անշուշտ, անհրաժեշտ է բանաստեղծությանը: Կյանքում էլ այդպես է: Անազատության մեջ է հստակ զգացվում ազատության գինն ու կարևորությունը: Վանդակում ապրող թռչունն անգամ մի նպատակ է ունենում՝ ազատ թռչել: Բանաստեղծությունը ևս պետք է ազատ լինի հանգ ու վանկի կաղապարից: Անթաքույց հաճույքով եմ ընթերցում մեր արցախահայ գրողների ստեղծագործությունները: Նաև շնորհակալ եմ երիտասարդ գրող Հայասեր Յովսեփյանին, ում օգնությամբ ես առաջին անգամ զգացի բանաստեղծության շունչն ու ծայրը:

**-Գրողի դիմանկարը ժամանակի արտացոլա՞նքն է, թե՞...**

-Յուրաքանչյուր գրող կերտում է իր ապրած ժամանակը, և յուրաքանչյուր ժամանակաշրջան՝ կերտում իր գրողին: Հետևաբար գրողը չի կարող ամբողջովին անկախ լինել իր ապրած ժամանակից: Գրողի լավագույն դիմանկարը ծշմարիտի, զեղեցիկի և իր ապրած ժամանակաշրջանի զեղարվեստական արտացոլանքն է յուր ստեղծագործություններում: Ե՛վ ինչպես իմ շատ սիրելի գրող Չարենցն է ասում. «Տեղ չի հասնում նա, ով ավտոյի դարում ֆայտոն կնստի»:

**-Ո՞ր ստեղծագործությունն ես ամենաշատը սիրում:**

-Իմ սիրելի գործերից է Վարդան Հակոբյանի «Հայրենիք» բանաստեղծությունը, որտեղ բանաստեղծը մոր ծայրով գնում է մանկություն, և այդ սերը մոր ու հայրենիքի հանդեպ հավասարազոր է: Շատ հավանեցի նաև մեր օրերի գրող Մարտիրոս Որմի «Ռեկետ»-ը, որի գաղափարը խավարի մեջ լույսի առկայության բնորոշումն է, կրկին ընկերասիրություն ու հայրենասիրություն:

**-Քո մաղթանքը՝ ուսանողներին:**

-Մաղթում եմ ստեղծագործական եռանդ, մշտապես ունենան մտքի ազատություն և կամքի մեծ ուժ: Շնորհավոր նաև գալիք Ամանոր և Սուրբ Ծնունդը:

**Հարցազրույցը՝ Անահիտ Հակոբյանի**



# Կ Յ Ա Ն Ք Ը Գ Ե Ղ Ե Ց Կ Ա Ց Ն ՈՒ Մ Ե Ն Ս Տ Ե Ղ Ծ Ա Գ ՈՐ Ծ ՈՂ Մ Ա Ր Դ Ի Կ

Կյանքը յուրատիպ գույններով գեղեցկացնում են արվեստասերներն ու ստեղծագործողները: Այսօրվա մեր զրուցակիցը ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Նարե Ավանեսյանն է, ով արվեստը համարում է իր կյանքի անբաժան մասը և օժտված է նկարելու ինքնատիպ ձիրքով:

**- Նարե՛, ինչպե՞ս եք ընտրում Ձեր նկարների թեմաները:**

-Նկարների թեմաները ինքնըստինքյան ծնվում են մտքումս, երբ վերցնում եմ վրձինը: Դրանք բխում են թե՛ իմ ներաշխարհից, թե՛ իմ տրամադրությունից, և թե՛, առհասարակ, որևէ միջադեպից, որը խոր հետք է թողել ինձ վրա:

**-Ինչպիսի՞ հատկություններով պետք է օժտված լինի իսկական նկարիչը:**

-Ես դեռ ինձ իսկական նկարիչ չեմ համարում, դրա համար մի փոքր դժվարանում եմ պատասխանել, բայց իմ կարծիքով իսկական նկարիչը պետք է կարողանա այնպես արտացոլել իր ներաշխարհը, որ դիտողին փոխանցի իր հոգու ողջ ջերմությունը, գունային երանգները:

**-Ո՞րն է նկարչի տեղը հասարակության մեջ:**

-Նկարչի տեղը, առհասարակ, իր արվեստանոցն է, իսկ եթե մի քիչ ավելի լուրջ մոտենանք հարցին, ապա նրա տեղը ժողովրդի, մարդկանց սրտում է: Լավ նկարչի, արվեստագետի կարիք միշտ էլ կա: Նկարչի տեղն այնտեղ է, որտեղից հնարավոր է արտահայտել հայրենիքի, ժամանակաշրջանի բարքերը: Նրա աշխարհայացքը ծնվում է հասարակության, կյանքի հետ փոխհարաբերություններից, և յուրաքանչյուր գործ ստեղծելիս նա հաշվի է առնում նաև այդ հասարակության պահանջները:

**-Կպատմե՞ս, թե ինչպես սկսվեց ամեն ինչ, ինչպե՞ս էին ստացվում քո առաջին նկարները:**

-Անկեղծ ասած, չգիտեմ, երբ է իմ մեջ արթնացել նկարիչը, երևի թե այն ժամանակ, երբ եղբայրս խնդրեց ինձ օգնել նրան այդ հարցում: Այդ ժամանակ նկարներին համապատասխան գույներ էի տալիս: Հետո 11- 12 տարեկան հասակում ինձ մոտ հետաքրքրություն առաջացավ նկարների հանդեպ: Ես ուշադրությամբ և՛ դիտում, և՛ սովորում էի եղբորիցս:

**-Ովքե՞ր են Ձեր սիրելի նկարիչները:**

- Նկարիչը նախ պետք է գտնի ինքն իրեն և իր ոճը: Ես չեմ գտել այդ նկարչին, բայց ոգեշնչվում եմ շատերից, ինչպիսիք են Սալվադոր Դալին, Լեոնարդո դա Վինչին և վերջերս էլ Աշոտ Առաքելյանը:

**-Ի՞նչն է Ձեզ ոգեշնչում ստեղծագործելիս:**

-Ես հիմնականում նկարում եմ դիմանկարներ: Ինձ ոգեշնչում է այն մարդը, ում ցանկանում եմ նկարել:



**-Ի՞նչ եք կարծում, արվե՞ստն է խորացնում մարդուն, թե՞ մարդն է արվեստը խորացնում:**

-Միանշանակ պատասխան չեմ կարող տալ, երկուսն էլ պայմանավորված են միմյանցով, արվեստը լայն հորիզոն է բացում մարդուն ճանաչելու համար:

**-Ասում են՝ ստեղծագործող մարդը երբեք չար լինել չի կարող, արդյո՞ք այդպես է:**

-Այս հարցին կպատասխանեմ հետագայում, բոլոր նկարիչները իրենց մեջ թաքցնում են երկու հոգի, երկու էություն, նրանց մեջ առկա աստվածայինը և սատանայականը, մարդ պետք է ձգտի աստվածայինը արթուն պահել միշտ:

**Հարցազրույցը՝  
Անգելինա Համբարձումյանի,  
լրագրություն 4-րդ կուրս**

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶՈՐԱՄԱՍ

Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանողներն օրերս այցելել են N զորամաս, հանդես եկել մշակութային ծրագրով և կազմակերպել ինտելեկտուալ խաղ:

Նախաձեռնությունը ուսանողական խորհրդի ակտիվ անդամներինն էր, որն իրականացավ ՊԲ աջակցությամբ: Այցի ընթացքում ուսանողները ներկայացրել են մշակութային ծրագիր, զինվորների հետ պարել ազգագրական պարեր, ուժերը փորձել ինտելեկտուալ խաղում: Զինվորներին հանձնել են նաև ֆակուլտետի ուսանողների կողմից պատրաստած նվերներ, նամակներ՝ լավագույն մաղթանքներով: Ուսանողներն օրն ամփոփել են՝ զինվորների հետ մասնակցելով ճաշի:

Ուսանողներն իրենց երախտագիտության խոսքն են հղել զորամասի սպայական կազմին, զինվորներին՝ հայրենիքի սահմաններն անառիկ պահելու և ջերմ ընդունելության համար: Բանակ-հասարակություն կապի ամրապնդման



ուղղված մամուտիպ միջոցառումները, ֆակուլտետի պատասխանատուների հավաստմամբ, շարունակական են լինելու:

**Էդիտա ԱՌՍԱՍՅԱՆ,  
Բնագիտական ֆակուլտետի ՈՒՍ նախագահ**

# Ի Մ Ս Ե Ր Ա Ր Ց Ա Ւ



**Քաղաքը, որի մասին ուզում եմ պատմել, լեռների զմրուխտե լանջերին թիկնած արևաշող մի բնակավայր է: Աշխարհի միլիոնավոր մարդկանց համար այն հեռավոր, անհայտ, անգո երկրի մայրաքաղաք է գուցե, որի մասին լսել են ինչ-որ բան կամ չեն լսել ոչինչ, սակայն ինձ համար...Ինձ համար կապուտաչյա Ստեփանակերտը հրաշք է, աշխարհի ամենազմայլելի անկյունը, ամենաքքնաղը, ամենաթանկը, միակը, որից դուրս ես չկամ...Նրանից են սկիզբ առնում իմ բոլոր երազները, նրա հետ են կապվում բոլոր նպատակներս, իղծերս, ցանկություններս...Ալեկոծ հոգուս մրմունջը ծաղկում է շուրթերիս:**

Քաղաք իմ հարազատ, քո աստվածատուր սուրբ հողից եմ ծնվել ես, սնվել քո պատմությամբ...Դու ինձ համար առանձնահատուկ ես ու անկրկնելի: Դու իմ հոգու թրթիռն ես, արյան ավիշը, ուրախության աղբյուրը:

Իմ հերոս քաղաք, արնաշաղախ, վիրավոր, բայց փյուռնիկի պես վերածնված ու բարգավաճ: Քո մեջ թևածում է հայկական անկոտրում ոգին, որ խաղաղության երաշխիք է, և Վերածննդի հրապարակում ծածան-

վող եռագույնը ավետում է արյան թանկ գնով ձեռք բերված Հաղթանակը:

Ստեփանակերտ...հաղթանակի՝ և վերածննդի քաղաք, դու դարձար հայի դարավոր վրեժի կանչը, դարձար փարոս, որ տուն է բերում մոլորված ճամփորդներին, դարձար աշխարհասփյուռ հայության հույսը, հավատը, նպատակը:

Հավատա՛ ինձ, հարազատս, ես հպարտ եմ, որ քո զավակն եմ: Աչքերս ջերմանում են քո շենքերին, ծաղկուն փողոցներին ու գեղատես քանդակներին նայելիս, որովհետև ամեն ինչ այստեղ իր խորհուրդն ունի, իր ավանդությունը: Եվ ես գիտակցում եմ, որ այս ամենը, ինչ եղել է, ինչ կա, ինչ լինելու է, ի՛մ պատմությունն է. սրանով եմ ես ներկայանալու աշխարհին, սրանով եմ հպարտանալու մեր սերունդները:

...Բացվել են աշխարհի բոլոր փակ դռները, և հայության բեկորները կարողանում են շփվել իրար հետ: Ես գիտեմ, որ Ստեփանակերտը բոլոր հայերի երազանքների ու ոգեշնչման աղբյուրն է, ջերմացնող լույսը, հաղթանակի դրոշմը:

Ծաղկուն զբոսավայրերով ու հոյակերտ հուշակոթողներով այս դրախտավայրը նաև իմ ոգեշնչման ու եռանդի աղբյուրն է: Ես այս քաղաքի մի մասնիկն եմ, նրա ամբողջացմանը նպաստող կենսածին հյուլեմ, սիրող ու երախտապարտ զավակը: Իմ փորրիկ սիրտը բաբախում է քաղաքիս ու նրա խաղաղասեր բնակիչների համար, և ես երազում եմ դառնալ Ստեփանակերտի լուսաշող ապագան կերտողներից մեկը, նրա երջանիկ լուսաբացների ավետաբերը, հերոսական անցյալի պատմաբանը և ներկայի աղոթարարը:

Աստղնատուն ես դու հիմա դարձել...  
Բայց ես ավելի պայծառ եմ տեսնում  
Քո գալիք օրը, իմ լուսե՛ քաղաք:

**ԱՆՆԱ ՍՈՒՍԱՅԵԼՅԱՆ,  
Թարգմանչական գործ, 3-րդ կուրս**



# Մ Ո Ր Ս Յ Ո Ւ Շ Ե Ր Ի Ց

Դեկտեմբեր եր... Դպրոցական էի: Չմտան սովորական ցրտաշունչ օր էր: Թեև ծյուն չկար, բայց ծմռան սառը շնչից բոլորս դողում էինք: Մեր միակ հույսն ու տաքանալու աղբյուրը դասարանում դրված փայտի վառարանն էր, թեև հին ու մաշված, երեսի թիթեղին մի քանի անցք, բայց, ինչևէ, տաքանում էինք: Այսօրվա պես հիշում եմ, 7-րդ դասարանում էի սովորում: Դեկտեմբերի յոթն էր՝ ուրբաթ, սպասում էինք հաջորդ դասաժամի սկիզբն ազդարարող առաջը հնչելուն, ժամանակն ասես կանգ էր առել, իսկ մենք շտապում էինք վայրկյան առաջ ավարտել դասերը:



Ահա ներս մտավ ուսուցչուհին՝ ցրտից ամբողջովին կարմրած դեմքով, ու մեզ ողջունելուց հետո շտապեց դեպի վառարանը: Օրվա երրորդ դասն էր, դժգոհ ու անհասկանալի դեմքերով բոլորս նայում էինք գրատախտակին: Ուսուցչուհին փորձում էր ինչքան հնարավոր է արագ ավարտել դասն ու մեզ տուն ճամփել: Շտապում էր... Բոլորս էինք շտապում: Բայց ու՞ր և ինչու՞՝ անհասկանալի էր: Դասն ավարտին մոտեցավ, 11:40 էր, դեռ նստած էինք պայծառ դեմքերով: Հանկարծ եղավ անդառնալիս: Պատուհանները դողդացին, ապակիները փշուր-փշուր եղան, գրատախտակը վայր ընկավ, վառարանի բերանից մոխրից ստեղծված ամպ դուրս ելավ: Հատակն, ասես, փախչում էր մեր ոտքի տակից: Ամեն ինչ տատանվում էր... Երկրաշարժ էր


րի ընթացքում փոշեկույտի էին վերածվել երբեմնի տներն ու ձեռնարկությունները, գյուղացու միակ եկամտի աղբյուրները և այլն: Բայց նյութականը ոչինչ էր մարդկային կորստի կողքին: Աղետի զոհ դարձան շուրջ 25 հազար մարդ. մեկը մանուկ՝ կաթը բերանում, մեկը հարսիկ՝ հարսի քողով եկեղեցում, մեկը հոգնած բանվոր՝ գործարանում, մեկն էլ պարզապես շենքի մոտով անցնող անցորդ, որը կարող էր փրկվել խանութում հերթի մեջ ուշանալու դեպքում: Ինչևէ, ճակատագրին դեռ ոչ ոք հաղթել չի կարողացել: Անտուն դարձավ 500 հազարից ավելի մարդ: Գյուղացու՝ տարիների ստեղծած մի վայրկյանում ջուրն ընկավ, աչքի առաջ փշուր-փշուր եղան իր նպատակները: Աշխարհի հայությունը ոտքի ելավ, ձեռք մեկնեց տուժածներին: Ամսիջապես շուրջ 113 երկրներից օգնություն եկավ Հայաստան: Ոչ մի որբացած մանուկ մանկատան դուռը չընկավ, ողջ մնացած ամեն մի հայ ընտանիք հանձն առավ որդեգրել անտուն, անծնող մնացած մանուկներին: Բնությունը դեռ այդքան անարդար, դաժան չէր վարվել հայի հանդեպ: Մի կողմից այդ աղետը, մյուս կողմից չափազանց ցրտաշունչ եղանակն էլ էր բազմաթիվ մարդկանց մահվան պատճառ դարձել: Երկրաշարժը ավերեց հայի հողը, տունն ու ընտանիքը: Մի վայրկյանում ի չիք դարձան հազար-հազար մարդկանց երազանքներ կամ պարզապես փլատակների տակ մնացին և՛ իրենք, և՛ իրենց նպատակները: Ոչ ոք մահվան պատրաստ չէր, ոչ ոք մահ չէր ուզում, կյանքն այնքան գեղեցիկ էր, որ անկարելի էր հեռանալ, թողնել այս կյանքը: Բայց ո՞ւմ մտքով կարող էր անցնել, որ խաղաղ ու երազանքներով լի կյանքի ընթացող գնացքը հենց իր համար է մահվան վերջին կանգառին հասել, հենց ընթացքը պետք է իջնի: Ո՞վ կարող էր պատկերացնել, որ 11:40-ը իր ապրած տարիների վերջին պահն է... ամենավերջինը:

**Ալյոնա ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, Լրագրություն 2-րդ կուրս**

-Շուտ բոլորդ դուրս եկեք... արագ, արագ, դողացող ու վախեցած ձայնով գոչեց ուսուցչուհին: Բոլորս ապշահար էինք, վախեցած, դեռ չենք գիտակցում՝ ի՞նչ էր դա, ինչպե՞ս կարող էր ամեն ինչ շարժվել: Իրար իրախրելով, ձեռքներս գլխներիս պահած, դուրս եկանք: Շտապում էինք դուրս գալ փակ տարածությունից: Բոպեներ տեց աղետը: Ուշքի չէինք գալիս: Դրսի ցուրտը ոչինչ էր մեր վախի ու սարսափի կողքին: Բոլորը շտապում էին, բայց արդեն հստակ գիտեինք, թե ուր և ինչու էինք շտապում: Ուզում էինք թողնել առաջ տան անդամների վիճակի մասին տեղեկություններ իմանալ: Դադարել էր ամեն ինչ, տատանումներ գրեթե չկային, կային միայն վախից ու ցրտից դողացող մարդիկ : Ամեն ինչ քառսի վերածվեց... դեպի դաշտերը բացվող երբեմնի պատուհանը ապակե բեկորների էր վերածվել, իսկ բոլորիս տաքացման հույս դարձած վառարանի երեսի անցքերը հարյուրապատկվել էին, գրատախտակին գրված վարժությունը կիսատ էր, կեսը փշրվել էր: Կյանքը իրոք դադար առավ, բայց ոչ մեզ համար, այլ երկրաշարժի էպիկենտրոն դարձած Սպիտակի ծեր ու մանկան, մոր ու որդու համար: Փաստորեն մենք Արցախում միայն չնչին տատանումներ էինք զգացել, սարսափելի էր պատկերացնել սպիտակցիների ու գյումրեցիների վիճակն այդ ավերիչ պահին: Վայրկյաններ

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ. ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հենց վաղը, երբ լույսը, հետո խանութը բացվի, քարտեզ եմ գնելու: Մեծ, գունավոր, իսկական-քաղաքական քարտեզ: Աշխարհի բոլոր գետերով, ծովերով, օվկիանոսներով: Հենց քարտեզ գնեմ, ամեն ինչ իր տեղը կընկնի:



\*\*\*  
Չնայած գիրքը ընթերցել էի, գրադարան չգնացի ու այսօր երեկոյան նոր գիրք չեմ կարող ընթերցել: Նշանակում է՝ երեկոն տխուր է ու անիմաստ: Առավոտյան գրադարանում համոզում եմ, որ 2-ի փոխարեն 3 գիրք տան, ասում եմ՝ 10 օրում 3-ն էլ կբերեմ: Տալիս եմ:

Գերի եղունգները, բայց բոլորինը ներկված էին:

\*\*\*  
Վաղվա ստուգարքի համար ամբողջ օրը ինչ-որ էջեր եմ կարդացել, ու հիմա արդեն վաղվա ստուգարքի օրն է, այսինքն՝ կեսգիշերն անց: Հիշել եմ, որ դասի ընթացքում նոթատետրիս մեջ նշումներ եմ արել, ուզում եմ դրանք էլ կարդալ: Չեմ գտնում: «Գրողը տանի, էս փոքր բլոկնոտում ինչ ասես կա՝ կապույտով, կարմիրով, կանաչով գրված՝ հարցազրույցներ, թերթային հայտարարություն, հեռուստատեսային սցենար, գրքերի անուններ, մեջբերումներ, հեռախոսահամարներ ու... բանաստեղծություններ: Օրերի, մարդկանց ու տխրության մասին: Կապույտով, կարմիրով ու կանաչով»:

\*\*\*  
«Թեյ կխմե՞ս» հարցնում եմ և պատասխանում՝ «այո»: Երբեմն տխուր է ստացվում, բայց միշտ չէ այդպես: Փոքր քրոջս շատ եմ կարոտում: Երբեմն տխուր է ստացվում, բայց միշտ չէ այդպես:

\*\*\*  
Ինչ փնտրում էի գտա, կարդացի, հասկացա կարծես: Ի դեպ էս տողերն էլ նույն նոթատետրում եմ գրում, չնայած գիտեմ՝ մի օր էլ սա եմ փնտրելու ու բարկանալու: Վաղվա ստուգարքից առաջ լուսաբանվելիք նյութն էլ էստեղ կգա, դրա համար էլ տեղ կգտնվի, որովհետև այստեղ նույնիսկ բանաստեղծություններ կան՝ սպասող, կյանքին խառնված, բայց մի տեսակ անկյանք բանաստեղծություններ:

\*\*\*  
Մի անգամ, երբ բարկացած էի, այնպես էի նայում մարդկանց, կարծես ոչ միայն իրենք մեղավոր են, այլ մի քիչ, դե... անհասկացող են: Այդ պահին ինչ-որ հարազատ, շատ ծանոթ բան զգացի: Ես չգիտեի, թե ինչ հայացք էր դա, բայց համոզված էի՝ մի անգամ հենց նույն հայացքով ինչ-որ մեկն էլ ինձ էր նայել: Հետո տանը՝ հայելու դիմաց փորձեցի նորից նույն հայացքով նայել, բայց չստացվեց: Այնքան զարմացա, որ անգամ մի քիչ ուրախացա: Հաստատ, ես էլ եմ մեղավոր ու անհասկացող:

\*\*\*  
Չեմ սիրում, երբ ուշանում եմ: Ես էլ աշխատում եմ չուշանալ, բայց երբեմն ստացվում է: Ստացվում է ոչ թե այն պատճառով, որ շատ զբաղված եմ, այլ որովհետև երբեմն վերջին պահին քիչ է մնում միտքս փոխեմ ու չգնամ: Ե՛հիշտ ասած այդ մասին շատ եմ մտածել՝ նույնիսկ երազանքներից հրաժարվելու իմ սովորության մասին, երբ դրանք հնարավոր է արդեն իրականանան: Մտածել եմ ու հասկացել՝ պայթարել չեմ սիրում:

\*\*\*  
Արդեն քարտեզ ունեմ՝ մեծ, գունավոր, իսկական-քաղաքական քարտեզ: Աշխարհի բոլոր գետերով, ծովերով, օվկիանոսներով: Աշխարհը փոքրացրել եմ պատին ու հիմա ամեն օր սուրճի կամ թեյի բաժակը ձեռքիս մտածում եմ՝ ո՞ւր գնալ: Երևան, Կարին, Ադանա, Միջերկրական ծով, հետո անցնում եմ Ջիբրալթարի նեղուցով ու ընկնում Ատլանտյան օվկիանոս: Վերջ: Ատլանտյան օվկիանոսը չեմ կարողանում անցնել, լավագույն դեպքում վերադառնում եմ: Բայց, գիտե՞ս, օրեր կան՝ ոչ մի տեղ չեմ կարողանում գնալ: Այդպիսի շատ օրեր կան:

\*\*\*  
Չնայած ցուրտ էր, ձեռքերս տաք էին՝ տարօրինակ բան, անգամ ամռանն են սառը լինում: Եղունգներս բաց վարդագույն էին, ուզեցի տեսնել, թե ինչ գույն ունեն ուրիշ-

\*\*\*  
Եթե կգրես, մի 2 տող էլ դու գրիր, պատմիր՝ ինչպես ես և ինչ ես անում, թե չէ ցածր առաստաղով այս նեղ սենյակներն արդեն սիրտ են մաշում:

**Արաքս Միրզոյան Լրագրություն, 3-րդ կուրս**